ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտությունը՝
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Որակավորումը՝
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ → ***Առկա***, ***Հեռակա***

ՈՒՍՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- ***Առկա՝*** *4 տարի*
- ***Հեռակա՝*** *5 տարի*

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ***Մրցութային՝*** *Մ(գ), Հլգ(գ) կամ Օտլ(գ)*
- ***Ոչ մրցութային՝*** *Օտլ կամ Հլգ*

ՀՊՏՀ Դիմորդ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ՝

- ***Առկա՝*** *600.000 ՀՀ դրամ*
- ***Հեռակա՝*** *450.000 ՀՀ դրամ*

ԿՐԹԱԹՈՇԱԿ՝

- ***Սովորական՝*** *ամսական 5000 ՀՀ դրամ*
- ***Գերազանցության՝*** *6050 ՀՀ դրամ*
- ***Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի՝ Մ. Քոթանյանի անվան կրթաթոշակ՝ ամսական*** *20 000 ՀՀ դրամ*

ՀՊՏՀ ուսանողներն ըստ տարակարգի՝ 30-70%-ի միջակայքում, օգտվում են նաև ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից, այդ թվում՝ սոցիալապես անապահով, միակողմանի ծնողազուրկ, սահմանամերձ շրջաններից ուսանողները: Զեղչման տարակարգերի մասին առավել մանրամասն տես ***այստեղ****:*

Տնտեսագետի մասնագիտությամբ կարելի է աշխատել տնտեսության բոլոր բնագավառներում և ոլորտներում: Տնտեսագետների նկատմամբ պահանջարկը բարձր է ինչպես պետական կառավարման մարմիններում, այնպես էլ մասնավոր ընկերություններում և վերլուծական կենտրոններում: Տնտեսագետի որակավորումը հնարավորություն է տալիս հիմնելու սեփական բիզնեսը:



«Տնտեսագիտություն» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են զբաղեցնել տնտեսագետի, տնտեսագետ-խորհրդատուի, միջազգայնագետ-տնտեսագետի, մակրոտնտեսագետի, փորձագետի, վերլուծաբանի, հարկերի, մաքսատուրքերի, ֆինանսների, բյուջեի վերահսկման, շուկաների ուսումնասիրության, մրցակցային քաղաքականության, ձեռնարկությունների, գնագոյացման, էկոնոմետրիստի, տնտեսական կանխատեսումների, կորպորատիվ վերլուծությունների մասնագետի, արդյունաբերության, գյուղատնտեսության, տնտեսության մյուս ճյուղերի, սոցիալական ոլորտի պաշտոններ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններում, ֆինանսական համակարգում, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկում, առևտրային բանկերում, ապահովագրական և վարկային ընկերություններում, մասնավոր հատվածի ընկերություններում ու միջազգային կազմակերպություններում, գիտահետազոտական կենտրոններում և հասարակական կազմակերպություններում: